ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1950 *Общественные науки*

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

# ՖՐԱՆՍԵՐԵՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Մերձավոր Արևելքի պատմության, հնագիտության, աղգագրության, արվեստի ու հոդևոր կուլտուրայի պատմության ուսումնասիրմանը արևմտյան գիտնականները առանձնապես մեծ չափերով ձեռնամուխ են եղել 19-րդ դարի երկրորդ կիսում և մասնավորապես 20-րդ դարում։ Արևելքի նկատմամբ նրանց հետաքրքրությունը աճում էր արևմտյան տերությունների կողմից արևելքը տնտեսապես և քաղաքականապես նվաճելու քաղաքականության դուրգրնթաց։ Նույնն է եղել նաև Հայաստանի նկատմամբ արևմտյան տերությունների ցուցաբերած հետաքրքրության պատճառները։*

*Բուրժուական գիտնականներն այդ ուսումնասիրությունը կատարել են իդեալիստական հիմունքներով, պաշտպանելով ռասայական, աղգային ու կրոնական խտրականությունը, արևելքի ժողովուրդները մեկը մյուսին հակադրելու քաղաքականությունը։*

*Ակադեմիկոս Ռենե Գրուսեն արևելագիտությանը վերաբերող մի շարք աշխատություններ է տվել։ Նրա վերջին գործը վերաբերում է Հայաստանի պատմությանը, որը լույս է տեսել Փարիզում, 1947 թ.։*[1]

*Գրախոսվող աշխատության մեջ հեղինակը ներկայացնում է հայ ժողովրդի քաղաքական պատմությունը սկզբից մինչև 1071 թ. բաժանելով այն տասներկու գլուխների։*

*Սակայն հայ ժողովրդի պատմությունը Ռենե Գրուսեն շարադրում է իդեալիստական և մետաֆիզիկական հիմունքներով, բուրժուական մոտեցումով։ Հայաստանը դիտելով որպես խոշոր տերությունների (մասնավորապես եվրոպական տերությունների) կցորդ, Գրուսեն պարսավանքի է ենթարկում Հռոմին ու Բյուզանդիային՝ «այս անգամ ևս լքեցին հայերին» լոզունգով։ Աղգամիջյան վեճերն ու անհամաձայնությունները դիտում է որպես «ֆեոդալական էթիկա», կամ նրանց տալիս է կրոնական իդեալիստական մեկնաբանություն։*

* * *

*Աշխատությունն սկսվում է հայկական լեռնաշխարհի նկարագրությամբ, որտեղ տրվում է աշխարհագրական միջավայրի բնութագրությունը։ Համեմատելով Մերձավոր Ասիայի մյուս երկրամասերի հետ, հեղինակը հայկական աշխարհագրական միջավայրին հատուկ է համարում երկու գլխավոր բնութագիր՝ խորը ինքնատիպություն ներքին մասնատվածությունը։ «Սրանից են առաջանում հայոց պատմության երկու բնորոշ կողմերը։ Մի կողմից հայ աղգի հզոր ինքնուրույնություն, որ նրան հնարավորություն տվեց պահպանելու յուր դոյությունը հակառակ բոլոր ներխուժումների, գերիշխանությունների ու կատաստրոֆների, մյուս կողմից արմատացած ֆեոդալիզմը, որ հնուց մինչև 1064 թ. առիթ հանդիսացավ Հայաստանի համար թուլացման ու անհամաձայնության» (էջ 13)։*

* * *

*2-րդ գլխում հեղինակը խոսելով Հայաստանի նախնադարյան շրջանի մասին, գտնում է, որ նախապատմական շրջանում այս երկրամասում ապրել է մի ժողովուրդ, որի տնտեսության մեջ օրսիգաքարը մեծ դեր է խաղացել։ Գրուսեն կրկնում է Ժակ դե Մորգանի և այլոց սխալ տեսությունը, թե Հայաստանը պալեոլիթի, մանավանդ ստորին պալեոլիթի ժամանակաշրջանում բնակեցված չի եղել։*

*Սովետական գիտնականները այս տեսությունը ժխտեցին գտնված նյութական գյուտերի վրա հիմնվելով։ Հաստատվեց, որ սկսած ստորին պալեոլիթից վաղ շելյան շրջանից, այս երկրամասը բնակեցված է եղել։*

[1] Rene Grousset: de l'Academie Française, conservateur du Musée Cernuschi. Histoire de l'Armenie, dés origines a 1071. Avec dix cartes et cinq tableaux génealogiques Payot, Paris, 1947.

* *

Հայաստանի նախահայկական շրջանի մասին հեղինակը խոսում է 3-րդ գլխում։

Հիթիթական աղբյուրների վրա հիմնվելով հեղինակը գտնում է, որ Հայասա, Ազզի Իսուվա, Ալշե երկրամասի ժողովուրդները 1200 թ. (մեր թվականից առաջ) կամ-ակամ ենթարկվել են հիթիթական հեգեմոնիային։

Ռընե Դրուսեն Ուրարտական կուլտուրայի ծնողները համարում է ասորա-բաբելական փոխառություն, անտեսելով ճարտարապետության և մետաղագործական արվեստի զարգացման պրոցեսը, շինարարության զարգացումը. սխալ է նրա այն կարծիքը, թե «Ուրարտական արվեստ»-ի մասին խոսելը չափազանցություն պիտի լիներ, քանի որ մեզ հասած գործերը Ասորական ազդեցություն են ցույց տալիս»։ Թեև Ասորեստանի ազդեցությունը Ուրարտուի վրա անուրանալի է, սակայն ուրարտական ինքնուրույն և բարձր զարգացման հասած մետաղամշակությունը և բազալտի շարվածքով բարձրարվեստ ճարտարապետությունը Վանում, Մուսասիրում և այլուր, իրավունք չեն տալիս ուրարտական կուլտուրան Ասորա-Բաբելական պարզ փոխառություն համարել։ Պարզ ու մեխանիկական փոխառություններով կուլտուրա չի ստեղծվում. Ուրարտական պետության ու կուլտուրայի առաջացումն առանց ուրարտացիների և հայկական լեռնաշխարհի մյուս բնիկների նյութական արտադրության և հասարակական կյանքի զարգացման՝ դարավոր նախորդող փորձից, անհնարին է պատկերացնել։ Ուրարտուն ոչ թե սոսկ «առել է Ասորա-Բաբելական նյութական կուլտուրայից այն, ինչ որ իրեն համար հարկ էր, հյուսիսում Արաքսի և Սևանի երկրամասում յուր գերազանցությունն ապահովելու և հարավում յուր դաշտպանությունը կազմակերպելու համար Ասորեստանի դեմ», այլև նա ստեղծել է ինքնուրույն նյութական կուլտուրա, օգտագործելով յուր երկրամասի նյութական հնարավորությունները և այդ պայմանների հիման վրա միայն կարողացել է «Միացնել երկիրը, լի մի հավաքելով հայկական Տավրոսից մինչև Զալդիր, Տերսիմից մինչև Սևանա լիճ հարյուր այլազան տոհմեր միացված քաղաքական և կուլտուրական հասարակական համակեցությամբ» (էջ 64)։

* *

4-րդ գլխում խոսելով Հայաստանի առաջին դարերի մասին, հեղինակը բննարկում է հայ ժողովրդի և հայերենի ծագման ու աղդակցությունների կարևոր հարցերը, որոնք բուրժուական պատմագետներին, լեզվագետներին և հնագետներին խիստ շատ են զբաղեցրել ավելի քան մեկ դարուց ի վեր։ Ռընե Դրուսեն իր նախորդների հետևությամբ հայ ժողովրդի ու նրա լեզվի առաջացումը կապում է հնդկրոպական նախաբեղի, նախալեզվի հետ և մեկնաբանում է միդրացիոն, իր հիմքով ռասայական տեսությամբ։

Հայ ժողովուրդը, ինչպես և դրա նյութական և հոգևոր կուլտուրան հետևանք են հայկական լեռնաշխարհի բնիկների հասարակական դարավոր զարգացման։ Եկվոր ցեղերի և նրանց կուլտուրաների խաչաձևումները այս կենսական և օրինաչափ պատմական պրոցեսի մեջ երևան են գալիս որպես անցողիկ մոմենտներ։

Հայ ժողովրդի ծագումը Դրուսեն բացատրում է փոյուգյան ցեղախմբերից կտրված մի հատվածի դեպի Փոքր Ասիա դաղթելով և պնդում է, որ փոյուգյան ցեղից «կտրված» այդ հատվածը ստիպված է գնալ փնտրել ավելի հեռու դեպի արևելք մի նոր հայրենիք։ «Այդպես եղավ անկասկած արմենների ծագումը» (էջ 68)։ Ի հաստատումն յուր այս հակապատմական և սխալ եզրակացության՝ վկայակոչում է Հերոդոտի և Էվդոքիոսի վկայությունները, որոնք չեն կարող հիմք կազմել նման եզրակացությունների համար։

Սխալ է միգրացիայի տեսությամբ բացատրել մի ժողովրդի առաջացումը, այն էլ ենթադրական. երբեմն էլ երևակայական թեզիսներով։

Սովետական Հայաստանի դիտանականներն ապացուցել են, որ «հայ ժողովրդի կազմավորումը տեղի է ունեցել հայկական հողի վրա, տեղական էթնիկ բաղայի վրա, և տեղական հասարակական-պատմական, էթնիկ ե կուլտուրական միջավայրում»։[1]

Այնուհետև Դրուսեն առաջ է քաշում այն հարցը, թե ինչու հայերը իրենք իրենց կոչում են «հայ» և իրենց ընակած երկիրը «Հայաստան», պարսիկները նույն երկիրը ճանաչում են որպես «Արմինա», իսկ հույները՝ «Արմենիա» կամ «Արմենիս», բայց նա առաջադրված հարցի պատասխանը չի տալիս, սահմանափակվելով այն նշումով, թե «Այդպես հաճախ երևում է, որ մի ժողովուրդ ուտարներից ճանաչված լինի մի ուրիշ անվանումով, քան ինչ որ իրենք իսկ իրենց տալիս են։ Հույները իրենք իրենց հելլիններից կամ ախիններից դատ ուրիշ կերպ չէին

[1] Բ. Առաքելյան, Միդրացիոն տեսությունը և հայ ժողովրդի առաջացման հարցը։ Երևան, 1948, էջ 33։

անվանակոչում, նրանք հռովմեական աշխարհում ճանաչվեցին որպես „Graeci" անվանակոչումով (էջ 74)։

Ինչ խոսք, որ Գրուսեն հիմնվելով անալոգիայի թեորիայի վրա, անտեսում է այն, որ հայկական լեռնաշխարհի կենտրոնական և արևմտյան մասում հանդես է գալիս հայասաղգի տոհմացեղային միությունը մեր թ. ա. 15-րդ դարում, որը, մոտ երեք դար ռազմական ընդհարումների մեջ էր գտնվում խեթական պետության հետ և որի հետ պահպանում էր քաղաքական ու տնտեսական հարաբերությունները։ Հայասան ուներ սեպական զորք, լավականաչափ զարգացած տնտեսություն և կուլտուրա։

Նույնը կարելի է ասել և Հարավային Հայաստանում կազմավորված Արիմների (կամ Արմեն) ցեղային միության մասին։ Այս երկու ցեղային միությունները հայ ժողովրդի կազմավորման մեջ շատ այլ ցեղային միությունների ու խմբակցությունների թվում առավել վճռական դեր են կատարել և, ինչպես ապացուցել են սովետական գիտնականները, առաջինների անունով նոր կազմավորված ժողովուրդն իրեն կոչել է հայ և իր երկիրը Հայաստան, իսկ Արմեն և Արմենիա անունները ծագում են երկրորդ խոշոր ցեղային միության անունից և այսպես կոչել են մեզ Արիմների՝ հարավային հարևանները՝ մեդացիք և պարսիկները, ապա հույները և հռովմեացիք։

Ռընե Գրուսեի գրքի 5-րդ գլուխը ընդգրկում է Արաքսիայան դինաստիայի մոտավորապես երկու դարյուր հիսուն տարվա ժամանակաշրջանը։

Գրուսեն սխալ մեկնաբանություն է տալիս Մեծ Հայքի և Ծոփքի թագավորությունների առաջացման հույժ կարևոր պատմական փաստին։ Նա գրում է. «Մեծն Անտիոքոսը հայկական երկրները կառավարից երկու «սատրապեզ»-ներով, իրանական անուններով Արտաքսիաս և Զարիարադիս, նրանցից առաջինը՝ բուն Հայաստանը, իսկ երկրորդը՝ Ծոփքը ունեցան։ Երկու սատրապներն իրենց անկախություն հռչակեցին հռովմեական սենատի պրոտեկցիայով, և նրա ուսմունքով թագավորական տիտղոս ստացան» (էջ 81)։[1]

Ամենից առաջ նկատենք, որ այստեղ չեն բացահայտված հայկական պետականության առաջացման հիմնական պատճառները, իսկ ինչ վերաբերում է հռովմեական «պրոտեկցիային», ապա պետք է ասել, որ այդ աենդենցիոզ մոտեցումը գալիս է լատին հեղինակներից։ Ճշմարիտ է միայն այն, որ Հռոմը պատերազմ սկսելով սելևկյան թագավորության դեմ, ցանկանում էր, որ այդ պետությունը քայքայվի և նրանց ենթակա երկրները անջատվեն։ Սակայն Հռոմը բնավ էլ Հայաստանի կամ Արևելյան այլ երկրների անկախության կողմնակիցը, մանավանդ հովանավորը չի եղել։ Ընդհակառակը, Հռոմն ինքն էր ձգտում գավթել ամբողջ Արևելքը և հանդիսանում էր Հայաստանի անկախության կատաղի թշնամին, սկսած Տիգրան 2-րդի ժամանակներից մինչև մեր թվ. 4-րդ դարը։

Հեղինակը խոսելով Տիգրան 2-րդի և Հռոմի միջև եղած պատերազմների մասին, որպես աղբյուր վերցնում է Պլուտարքոսին և Ռեյնաքի հետևությամբ գտնում է, որ «Լուկուլլոսը յուր Տիգրան 2-րդին գրած նամակում միրժում էր ճանաչել նրա դրավումները և հայկական կայսրության պրինցիպը, իսկ այս բանը հասկացվում էր այն նամակից, որտեղ Լուկուլլոսը Տիգրանին տալիս էր պարզ «թագավոր» տիտղոսը և ոչ թե «թագավորաց թագավոր». նամակի թվականը ցույց է տալիս 71–70թթ., իսկ 69 թ. գարնանը Տիգրանը Միհրդատի հետ խորհրդակցություն ունեցավ։ Մինչդեռ այս վերջինը Պոնտոսը վերադարձնելու պիտի գնա, հայկական բանակը պիտի թափանցի Փոքր Ասիա Էլիկառնիայի վրայով։ «Լուկուլլոսը նրանց կանխելով նոր օրինակ հանդգնություն (ընդգծումը՝ մերն է) ուղիղ գնաց Տիգրանակերտ» (էջ 93)։

Ռընե Գրուսեն հռովմեական էքսպանսիոնիստական քաղաքականության մասին շատ զուսպ և հաշտվողական կարծիք ունի, փոխանակ չնզոք աղբյուրներ փնտրելու, հետևվում է Լուկուլլոսի ներբողանքը տվող Պլուտարքոսին։ 69 թ. գարնանը՝ Տիգրան 2-րդի և Միհրդատի հանդիպումը հռովմեական պատմարանի կողմից հնարված է ծածկելու համար Լուկուլլոսի Հայաստան ներխուժելու նենգությունը։ Լուկուլլոսը 69 թ. գարնանը, առանց պատերազմ հայտարարելու, գաղտագողի մտավ Հայաստան և այս ակտը Գրուսեն կոչում է «անօրինակ հանդգնություն»։ Միանգամայն իրավացի էր Մովսես Խորենացին՝ Լուկուլլոսի արշավանքները համարելով ելուզակային։

Տիգրան 2-րդի ժամանակաշրջանը եզրափակելով, հեղինակը պնդում է, թե Պոնտոսի թագավորը յուր ժամանակի ամենադինամիկ անձնավորությունն էր. այդ պատճառով էլ նա կարճ ժամանակում յուր թագավորությունը կորցրեց, նրա դինաստիան կործան-

[1] Ընդգծումը մերն է։

վից, «մինչդեռ Տիգրանը անպայման նվաճ հրապարակայնությամբ թողեց մի գործ, Հայաստանը» (էջ 100)։ Այլ խոսքով՝ պետությունների գոյությունն ու ոչնչացումը հեղինակը բացատրում է անհատների անձնական ընդունակություններով ու բնավորության գծերով։ Միանգամայն հակագիտական ու իդեալիստական այս մոտեցումը նկատելի է նաև գրքի այլ բաժիններում։

Հեղինակը Արտաշեսյան թագավորության վերջին շրջանի և մեր թվ. 1-ին դարի առաջին կեսի անկայուն վիճակը բացատրում է դեպի Հռոմը կամ պարթևական պետությունը հայերի կողմնորոշման փոփոխություններով։ Նա գրում է՝ «Դինաստիական այս անկայունությունը, իրոք հայկական ֆեոդալական մեծ ընտանիքների մեկ կամ մյուս թագապահանջի կողմնորոշվելով ապահովում էին իրենց անկախությունը, առաջացնելով մի անարխիա» (էջ 104)։

Նախ պետք է հիշել, թե այդ ժամանակաշրջանում դեռևս ֆեոդալական կարգեր գոյություն չունեին, կար հողատիրական ավագանին և կային ռազմիկ ստրկատեր հողատերեր։ Իսկ թագավորական իշխանության անկայունությունը հիմնականում հետևանք էր այն բանի, որ հռովմեացիք, ձգտելով դավթել Հայաստանը, հայկական դահի վրա բարձրացնում էին իրենց դրածուներին, որոնց գահընկեց անելով, երկրից դուրս էր նետում անկախությանը ձգտող հայ ժողովուրդը։

* * *

Գրքի 6-րդ գլխում Գրուսեն ամփոփում է «Հռովմեական պրոտեկտորատի» և Հայաստանի Արշակունյաց թագավորության ժամանակաշրջանը մինչև Տրդատ 3-րդի օրով՝ քրիստոնեության մուտքը Հայաստան՝ 287 թ., այսինքն մոտավորապես երկու հարյուր տարվա մի ժամանակաշրջան։

Որպես Գրուսեն հիմնականում հետևելով Տակիտոսին, թերագնահատում է հայ պետականության ինքնուրույն գոյությունը, նկարագրում է հայ Արշակունյաց և իրերական կրտսեր թագապահանջների կռիվները, Տրդատ առաջինի թագավորացումը 53 թ., հռոմեական թեկնածուների պաշտպանության համար 58 թ. Կորբուլոնի կատարած գրավումները, հռովմեացի պատմագրի տեղեկություններին հիման վրա հայ ժողովրդին ներկայացնում է որպես հռովմեացիների կողմնակից և թշնամի՝ Արշակունիների։ Մինչդեռ այդ նույն ժամանակաշրջանում Հայաստանում մեծ պայքար էր ծավալվել հռոմեացիների դեմ։ Արտաշատ քաղաքի կործանումը Կորբուլոնի կողմից սաստկացրել էր հայ ժողովրդի դայրույթը, ամեն կողմ պարտիզանական կռիվներ էին ծավալվել հռոմեացիների դեմ։

Գրուսեն աշխատում է ծածկել հռոմեական դորավար Պիտուսի պարտությունը, նվաղեցնելով Ռանդեոյի դաշնագրի պատմական նշանակությունը, այն մեկնաբանելով որպես «հռոմեական արծիվների պրեստիժը վերականգնելու և Հայաստանում Հռոմի պրոտեկտորատը հաստատելու միջոց», մինչդեռ Ռանդեոյի դաշնագրով Հայաստանում հաստատվում է Արշակունյաց թագավորությունը, որը կենաց ու մահու նահիմ մղելով հռոմեական դավթիչների դեմ, պահպանում էր երկրի անկախությունը։

3-րդ դ. 20-ական թվականներին Իրանում հաստատվեց Սասանյան թագավորությունը։ Մահացու վտանգ էր սպառնում Հայաստանի անկախությանը, որի պահպանման համար հայ ժողովուրդը պայքար է սկսում Սասանյան Պարսկաստանի դեմ։

Հեղինակը այնուհետև քննության է առնում պարթևական ազդեցությունը հայկական կուլտուրայի վրա, դիտելով այն միակողմանի։ Այդ ազդեցությունը նա տեսնում է՝ փոխառնված բառերով, իսկ հելլենական կուլտուրայի թափանցումը գտնում է «Արշակունիների ծառայությունում գտնվող արամեական քարտուղարների միջոցով» (էջ 116)։ Բաղդատության դնելով Արտաշեսյան դինաստիայի ժամանակը, հայկական արքունիքի հետևած հելլենիզացման հետ, գտնում է, որ այն «ընդունված չէր ոչ վարչականապես և ոչ էլ հայ ժողովրդի կողմից, այլ միայն ճաշակով»։ Գրուսեն սխալվում է յուր այս բաղդատության մեջ, որովհետև Արտաշեսյան դինաստիայի ժամանակ հելլենիստական կուլտուրան ավելի շեշտված էր և հայկական կուլտուրան աշխատում էր յուրացնել այն՝ տեղական կուլտուրայի հիման վրա, որի հիմքերը՝ ավելի խոր էին քան Արշակունյաց 3-րդ դարում։ Այնուհետև տեղեկություններ արձանագրելով հեթանոս Հայաստանի պանթեոնի մասին, հեղինակը վկայակոչում է հայկական հին աղբյուրները։ Հիմնվելով Մեյեյի և Մակլերի ստուգաբանությունների վրա, աշխատում է գտնել հայկական պանթեոնում արմենա-փյունիկյան, ուրարտական վերապրումներ և իրանական պանթեոնից փոխառումներ, գլխավորապես պարթևական շրջանում, շեշտելու համար պարթևա-իրանական ազդեցությունը հայկական կուլտուրայում։

Ակադեմիկոս Գրուսեն իդեալիստական սահ-

մանափակվածությամբ չի կարողանում կողմնորոշվել ժողովուրդների կուլտուրաների, մանավանդ իրեն զբաղեցնող հայկական կուլտուրայի զարգացման և կապերի հարցերում։

Այս հարցերը քննելիս նա գանց է առնում հարևան երկրների հասարակության զարգացման աստիճանի, հասարակական հարաբերությունների մեջ եղած ընդհանրությունները ու տնտեսական կապերի դերն ու նշանակությունը։ Նա միաժամանակ, միակողմանի մեկնարանություն է տալիս հարևան երկրների քաղաքական ու կուլտուրական փոխհարաբերություններին և տեսնում է միայն ուժեղների ազդեցությունը թույլերի վրա, կամ մեծ տերությունների ազդեցությունը փոքր երկրների վրա, վերջիններիս վերագրելով սոսկ ուրիշի կուլտուրան փոխ առնողի դեր։

7-րդ գլխում հեղինակը խոսում է մոտ մեկ դարաշրջանի մասին, այսինքն՝ 288 թվից մինչև Արշակունյաց իշխանության անկումը 389 թ.։

Քրիստոնեության հաստատումից հետո Գրուսեն Արևելքի երկրները բաժանում է ըստ կրոնի և հայ պարսկական կամ հռոմեապարսկական պատերազմներին էլ վերագրում է կրոնական բնույթ, հայտարարելով, որ դրանք երկու կողմից էլ սրբազան պատերազմ են քրիստոնեության և մազդեիզմի միջև։

Հեղինակն այս գլխում խոսում է երկրի պառակտվածության մասին առանձին ֆեոդալական իշխանությունների, նշում է Արշակ 2-րդի պայքարը պետության կենտրոնացման համար, թագավորական և եկեղեցական իշխանների ընդհարումները, սակայն չի տալիս այդ երևույթների տնտեսական սոցիալական հիմնավորումը և չի օգտագործում հայտնի բոլոր փաստերը։

Հայաստանի քաղաքական պատմությունը 4-րդ դարում, հեղինակի մոտ, ըստ էության հանգում է քաղաքական օրիենտացիաների և հռոմեական պրոտեկտորատի համար մղվող պայքարը։

Հաջորդ՝ 8-րդ գլխում հեղինակը տալիս է պարսիկների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի շրջանի պատմությունը՝ մինչև արաբական արշավանքները։

Գրուսեն Հայաստանի առաջին բաժանումը համարում է պատահական ու դիպվածական դիպլոմատիկական մի երևույթ։

Այնուհետև՝ կանգնած լինելով Եվրոպայի կողմից Արևելքը «հովանավորելու» տեսակետի վրա, կամենում է, որ Հայաստանը միշտ քրիստոնյա Հռոմի կցորդը մնար։ Դրա մեջ է տեսնում և՛ Հայաստանի և՛ Եվրոպայի բարիքը։

Այստեղ ակնհայտ կերպով դրսևորվում են հեղինակի արդի քաղաքական հայացքները, որ համընկնում են ֆրանսիական բուրժուազիայի այն շրջանների հայացքների հետ, որոնք ձգտում էին արևելքի մի քանի ժողովուրդների, կոնկրետ դեպքում հայերի հետ «սիրալիր» քաղաքականությամբ ուժեղացնել Ֆրանսիայի դիրքերը Արևելքում։

Այս դիրքերից է հեղինակը դատապարտում Բյուզանդիայի կրոնական աննեքսիոնիզմը Հայաստանի նկատմամբ։ «Բյուզանդական կրոնական աննեքսիոնիզմը այնքան դաժան էր, որ հարց է ծագում, թե հայաստանյան եկեղեցին ավելի կամ պակաս ժամանակամիջոցում կլանված պիտի չլիներ» (էջ 166), սրանից հետևեցնում է, որ Հայաստանի քաղաքական միացումը Իրանի հետ, թեև անվերջ տառապանքների պատճառ եղավ, սակայն ապահովեց յուր հոգևոր ավտոնոմիան։

Այնուհետև՝ անցնելով Պարսկաստանի դեմ 450 451 թ. թ. ապա և 481 թ. ապստամբությունների շարադրմանը՝ հեղինակը դրան տալիս է հայ կղերա-բուրժուական ազգայնական տրադիցիոն մեկնարանություն և նրան վերագրում է առավելապես կրոնական բնույթ։ Ապստամբությունների սոցիալ-տնտեսական և քաղաքական նշանակությունը չեն բացահայտված։

571 թ. ազատագրական շարժումը հեղինակը բացատրում է այն բանով, որ Սյունյաց Վահանի դրդմամբ Սուրեն Մարզպետը սպանում է հունասեր պարտիայի պետ Մանուել Մամիկոնյանին և Դվինում շինել է տալիս ատրուշան, «Որ մի դար առաջ ահագին շփոթություն էր առաջացրել սրտմտեցնելով հոգևորականությանը և ֆեոդալներին։ Այսպես առաջացավ ապստամբություն, որի գլուխն էր կանգնել դոքսն եղբայրը Վարդան 2-րդ Մամիկոնյանը և Հովհաննես 2-րդ կաթողիկոս Գաբեղյանը» (էջ 243)։

Արաբական ներխուժումներին նախորդող Սասանյան էպոխան հեղինակը ուսումնասիրում է Հայաստանի սոցիալ-տնտեսական դրության նկարագրությամբ։ Արձանագրում է դասակարգային շերտավորումներից միայն երկու խումբ՝ գանց առնելով սոցիալական հարաբերությունները և դասակարգային պայքարը։

Հեղինակը հայկական ֆեոդալիզմի մասին խոսելով, գրում է. «Մեզ թվում էր, որ ֆեոդալական հասարակարգը վերջնականապես

կազմակերպվել է հետևելով մեծ մասամբ Սասանյան աշխարհի տիպին, այն բացառությամբ, որ իրանյան սասանյանները միապետական ինստիտուտը պահեցին, մինչդեռ հայ ֆեոդալները նրանից թոթափվել էին» (էջ 387)։ Հեղինակը չի ասում, սակայն, թե որոնք են այն աղբյուրները, որոնք ցույց են տալիս, որ իբրև թե ֆեոդալական կարգերը Հայաստանում ձևավորվել են պարսից ազդեցությամբ։ Իրականում այդպիսի աղբյուրներ չկան։ Շատ աղքատ են պարսկական աղբյուրները՝ Պարսկաստանում ֆեոդալիզմի ձևավորման հարցը լուսաբանելու համար, մինչդեռ հայկական աղբյուրները բավականաչափ առատ են։

Ակադեմիկոս Երուսեն անտեսում է Հայաստանում ամենամեծ ֆեոդալը հանդիսացող հողևորականությունը, վանքերն ու եկեղեցիները, որոնք նվիրատվության, գնման ու գրավման միջոցներով խոշոր կալվածներ ունեին Հայաստանի բոլոր շրջաններում։ Անտեսվում է նաև շահագործվող դասի տնտեսական ծանր դրությունը, այն դասի, որը ծանր հարկեր էր վճարում իշխանության և ֆեոդալներին։ Հարկերը գանձվում էին հարկահավաքների կամայականությամբ, վճարում էին հողահարկ, որը 6-րդ դարի կեսից հետո գանձվում է նաև փողով, վճարում էին գլխահարկ, բերքահարկ, աշխատավորները ենթարկվում էին մարմնական պատիժների և այլն։

Հեղինակը չի խոսում Հայաստանի տնտեսական կյանքի մասին, նրա ուշադրությունից վրիպել է, որ Հայաստանը, բացի միջազգային փոխանակության կենտրոն լինելուց, արտահանում էր՝ ձի, ջորի, գինի, ներկ, հացահատիկ, յուղ, մեսազ, գործվածքներ և զորգեր։ Քաղաքներում մեծ տեղ էին գրավում արհեստավորները, կավագործությունը, կաշեգործությունը, զորդագործությունը, փայտամշակումը, դինագործությունը, ջուլհակությունը, ոսկերչությունը և այլն։ Այս արհեստները ժառանգաբար անցնում էին որդոց որդի։

* * *

Գրքի 9-րդ գլխում, Ի. Գրուսեն հետևելով հայ ժամանակագիրներից Սեբեոսին, Ղևոնդին, Վարդանին, Ասողիկին, նկարագրում է Հայաստանի վիճակը արաբական տիրակալության շրջանում։

Գրուսեն միանգամայն հակագիտական ու իդեալիստական եղանակով է դնահատում նաև արաբների վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ, դրա հիմքում ևս տեսնելով անհատների նախասիրությունները։ Նա գրում է. «Արաբական դինաստիան վատ էր տրամադրված Հայաստանի վերաբերմամբ, նրա համար, որ Մամիկոնյանները հույների կողքին էին կռվում, իսկ Բագրատունիները օմայանների կողքին, Արրասյանների դեմ (էջ 320)։

Երուսեն իրավացիորեն նշում է, որ Արրասյան խալիֆաների ժամանակաշրջանում հայ ժողովրդի կեղեքումը ծանրացավ, որին նպաստեց Հայաստանը հնազանդեցնելու նպատակով Հայաստանում արաբ բնակիչներ հաստատելու քաղաքականությունը, որը և ստիպեց հարստահարման ծայրագույն աստիճանի հասած հայ ժողովրդին, մասսայաբար դիմել արտագաղթի, բայց և այնպես հեղինակը ըստ արժանվույն չի գնահատում հայ ժողովրդի պայքարը արաբների դեմ։

Երուսեն, Աշոտ Մսակերի կապակցությամբ հարուցում է մի հնացած հարց, այն է՝ Ն. Ադոնցի առաջարկը նշանավոր պատմաբան Մովսես Խորենացուն համարել 775—826 թվերին ապրած մի պատմիչ։

Այս հարցը 19-րդ դարից ի վեր պատմաբանների և բանասերների կողմից բանավեճի առարկա է եղել։ Այժմ խնդիրը վճռված համարելով, ավելորդ է նրա մասին խոսել։

Սովետական գիտնականներ, ակադեմիկոսներ Մ. Արեղյանը, Ստ. Մալխասյանը և ուրիշները ապացուցել են, որ հակառակ Ֆրիդկանիրիերի եղրակացության, կարիերի, Խալաթյանի և Ն. Ադոնցի փաստարկումներին Մովսես Խորենացին մնում է 5-րդ դարի վերջին հիանամյակում և 6-րդ դարի սկզբներին ապրած մի պատմագիր։

Իրենե Գրուսեն իր աշխատության 11-րդ գլուխը հատկացրել է Բագրատունիների պատմությանը, դերադանցապես տալով թագավորների, իշխանների պատմությունը։

Անդրադառնալով Աշոտ 1-ի թագավորությանը՝ հեղինակը գտնում է, որ այն բացարձակ միապետություն և կամ կենտրոնացված իշխանություն չէր, այլ գոյություն ունեին միասնությունից դուրկ ֆեոդալական... հարաբերություններ, ապա, Գրուսեն իրավացի կերպով նշում է, թե այդ՝ չորս և կես դարի ընդմիջումից հետո արևելքում մեծ ապավերություն առաջացնող մի ակտ էր, նրանով ժամանակակիցները, քանդված հայկական թագավորությունը վերականգնված տեսան։

Այնուհետև խոսվում է Թոնդրակյանների մասին։

Իրենե Գրուսեն գտնում է, որ «Բարոյական

ու դոգմատիկական բնույթ կրող մոլորումներից դուրս, Թոնդրակյան շարժումը խանգարում էր հայոց եկեղեցական հիերարխիան, նրանցից օգտվում էին, սահմանամերձ երկրամասերում, գաղտնի կամ բացահայտ արմենիզմի հակառակորդները։ Այդպես էլ եղավ, Սյունյաց Հակոբ եպիսկոպոսը (918—959) փորձեց, ուզեց բաժանվել հայոց կաթողիկոսից, առարկելով՝ «Թե ձեռնտու չէ մի եպիսկոպոս նվերներ տա մի ուրիշ եպիսկոպոսի. «բոլոր հիերարխիան քանդող տրամաբանություն և գերազանցապես Թոնդրակյան» (էջ 470)։

Գրուսեն, որպես պաշտպան հոգևորականության հիերարխիայի, հանգել է սխալ հետևության։

Սովետական պատմագիտությունը, ելնելով պատմական մատերիալիզմի սկզբունքից, Թոնդրակյան շարժումը դիտում է ոչ թե որպես «բարոյական և տոհմական բնույթ կրող մոլորումներ», այլ սոցիալական մի հսկա շարժում, որ հայ ժողովրդի կյանքում հանդես է գալիս որպես դասակարգային պայքար։

Այս այն ժամանակաշրջանն էր, երբ աշխատավոր ժողովրդի կեղեքումը հայ ֆեոդալ իշխանների, եկեղեցու և հոգևորականների կողմից շարունակվում էր ավելի մեծ չափով։ Օրեց-օր սաստկացող այս կեղեքման դեմ էր ուղղված Թոնդրակյան գյուղացիական շարժումը։

Իդեալականացնելով Բյուզանդիան և նրա զորավարներին, մասնավորապես իդեալականացնում է ծագումով հայ զորավարներին։

Ամեն կասկածից վեր է բյուզանդական կայսրության մեջ հայ պետական կուլտուրական գործիչների, զորավարների ու զորքերի խաղացած զգալի դերը և դա բնական է, քանի որ հայերը զգալի տարր էին կազմում բյուզանդական կայսրության մեջ, իրենց հետ տանելով իրենց կուլտուրան և վարչա-ռազմական փորձը, սակայն հեղինակը փոխանակ այս բոլորի մասին գրելու, կանգ է առնում միայն նրանց հայ ծագման փաստի վրա։

Ռընե Գրուսեն Բագրատունյաց թագավորության անկման գլխավոր պատճառները համարում է բյուզանդական ճնշումը, Հովհաննես Սմբատի «ճակատագրական կտակը» և գործողության ակտիվ դերակատարների՝ Գագիկ 2-րդի տատանումները, Պետրոս Գետադարձի ընչասիրությունը, Վեստ Սարգսի ծախվածությունը, մանավանդ Գրիգոր Մագիստրոսի անգործունեությունը։

Հեղինակը մոռանում է հիմնականը՝ այն սոցիալական հանգամանքները, որոնց պայմաններում կատարվում էր այդ ամենը։ Ինչ էր ներկայացնում հայ հասարակության իրական պատկերը 11-րդ դարում։ Երկու դասակարգեր՝ մի կողմից աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներ, տիրացած կուտակված հսկա հարստությունների, իսկ մյուս կողմից սեփականազրկություն, կեղեքվածություն։ «Մինչև այժմ գոյություն ունեցող բոլոր հասարակությունների պատմությունը եղել է դասակարգային պայքարի պատմություն»[1]։ Այս պայքարի պատմությունն է, որ կրկնվում է հայ ժողովրդի պատմության էջերում։ Ժողովրդի դեմ պայքարելով, ֆեոդալները պատրաստ էին նրան զոհ տալ օտար տիրապետության։

Վերջին գլխում հեղինակը հետևելով Մաթեոս Ուռհայեցուն, պատմում է 1045—1048 թ. թ. Սելջուկյան արշավանքը։

Այս կապակցությամբ Գրուսեն դատապարտում է հայկական և վրացական զորաբանակները լուծարքի ենթարկելու բյուզանդական քաղաքականությունը, ինչպես և վարչա-ֆինանսական ծախքերը հոգալու համար սահմանվող կործանիչ հարկային քաղաքականությունը, քանի որ այդ ամենը ճանապարհ բացեցին սելջուկ նվաճողների առջև։

* * *

Եզրափակելով ակադեմիկոս Ռընե Գրուսեի սույն ընդարձակ աշխատության քննությանը նվիրված մեր գրախոսությունը, պետք է նշել, որ այն ընդգրկում է Հայաստանի նախնադարյան համայնական հասարակական ժամանակաշրջանից մինչև զարգացած ֆեոդալիզմի շրջանը, որտեղ մենք հանդիպում ենք հայ ժողովրդի կազմավորման մասին, օտար և հայ պատմագրերի հակասական կոնցեպցիաներին։ Այս զանազան թեորիաների քննարկման ընթացքում հեղինակի կողմնորոշումն է բուրժուա-նացիոնալիստական գաղափարախոսությունը, հակառակ այն բանի, որ այդ մեթոդոլոգիան ոչ մի հաստատուն հիմք չունենալով, կորցրել է պատմագիտական արժեքը։ Հեղինակը նպատակ ունենալով ներկայացնել ֆրանսիական ժողովրդին հայ ժողովրդի և Հայաստանի անցյալի պատմությունը, չի կարողանում տալ նրա ընդհանուր բնութագրի հարազատ պատկերը, այսինքն հասարակական-քաղաքական, տնտեսական, կուլտուրական կյանքի հարատև առաջընթաց զարգացումը։

Նման բուրժուական մյուս պատմագիրնե-

[1] Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Կոմունիստական պարտիայի մանիֆեստ. Հայպետհրատ, Երևան, 1948, էջ 18։

րի, հեղինակը, անտեսելով սոցիալ-տնտեսական իրագործությունները, Հայաստանը և հայ ժողովուրդը ներկայացնում է «որպես հաղթության գոտի»։

Ռենե Գրուսեն կարծեք խուսափում է սոցիալական հարցերի քննարկումից, նաև այն պատճառով, որպեսզի հաճո երևա հայ բուրժուազիային և հոգևորականությանը։

Հեղինակը ազգային ազատագրական պայքարին տալիս է կրոնական բնագդ, դնելով այն հոգևորականության ազդեցության ներքո, անտեսում է ազգային ազատագրական շարժման ստեղծողին՝ հայ ժողովրդին։

Անտեսված են ժողովրդական սոցիալական շարժումները և դասակարգային պայքարը և որով հարուստ է հայ ժողովրդի պատմությունը։ Նա այդ շարժումները ներկայացնում է որպես «կրոնական մոլորումների ծնունդ»։

Չկարողանալով գտնել սոցիալ-տնտեսական հակասությունների պատճառները, հեղինակը բոլոր անհամաձայնությունները կամ թշնամանքները բացատրում է ֆեոդալական բարոյականությամբ, կամ վերագրում է ֆեոդալական կենտրոնախույս ուժերին։

Ֆեոդալական հասարակական ֆորմացիան հեղինակի մոտ նույնացված է ֆեոդալական մասնատվածության և երկպառակությունների հետ։

Աշխատությունում չկա հայ ժողովուրդը, չկան դասակարգեր և նրանց փոխհարաբերությունները։ Միայն պատմության ասպարեզում երևում են գործիչներ, կրոնական կամ աշխարհիկ իշխաններ, թագավորներ։

Ռենե Գրուսեն, ուսումնասիրելով հայ ժողովրդի քաղաքական պատմությունը, նույնիսկ չի կարողացել դրսևորել հայկական պետականության արտաքին քաղաքականության իսկական էությունը, որը բնորոշելու համար կոչում է «Պրոտեկտուրա» կամ «Կրտսերների իշխանություն»։ Հարազատ բացատրությունը նա կարող էր կարդալ «Փավբստոս»-ում, ուր հայկական արտաքին քաղաքականությունը բնորոշվում է Վասակ Մամիկոնյանի կողմից Սասանյան Շապուհին ուղղված հետևյալ խոսքերով.

«Այժմ քո տեսեալ զիս անձամբս փոքրիկ,
Եւ սուրն իմ ոչ է ընդ իս,
Ոչ առեր զչափ մեծութեան իմոյ.
Զի ցայժմ ես քեզ առիւծ էի և արդ աղուէս։
Բայց մինչ ես Վասակն էի, ես Զեզ սկայ էի,
Մի ոտնս ի միոյ լեռին կայր,
Եվ միւս ոտնս իմ ի միւսոյ լերին կայր.
Ցորժամ յաջ ոտնս յենուի,
Զաջ լեառն ընդ գետին տանէի,
Ցորժամ ի ձախ ոտնս յենուի,
Զձախ լեառն գետին տանէի»։

Դ. ԹՈՂԻՐՅԱՆ